# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 307-Ա «06» փետրվարի 2023թ.

## ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1. Հաստատել «Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց», «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց», «Ձայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց», «Ա.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան», «Երևան քաղաքի պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան», «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան», «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան», «Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն», «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն», «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն», «Երևան» փողային նվագախումբ», «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» և «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-16 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի ու սույն որոշման 1-ին կետով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Տ.Ավինյանի վրա:

4. Սույն որոշմամբ սահմանված գործողությունները տարածվում են 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Revoked certificate

X 

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092

**ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**